****

<u>29.09.2012թ. N 1 նիստ</u>

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գիտական խորհրդի տարեկան պլանի հաստատում /Զեկ. Լ. Ֆլջյան/:
2. «Եվրասիա» լեզվամշակութային կենտրոնի կանոնադրության հաստատում /Զեկ. Լ. Ֆլջյան/:
3. 2012-2013 ուստարվա ԵՊԼՀ-ի բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ռ. Գևորգյան/:
4. 2012-2013 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ի. Մադոյան/:
5. 2011-2012 ուստարվա գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկ. Ա. Ապրեսյան/:
6. Մենդելեևի անվան կրթաթոշակի ներկայացվող ուսանողների ցանկի հաստատում /Զեկ. Ա. Ապրեսյան/:
7. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:
8. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը գիտական խորհրդի տարեկան պլանի հաստատման վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել գիտական խորհրդի տարեկան պլանը /գիտական խորհրդի տարեկան պլանը կցվում է/:

2012-2013 ուստարվա գիտխորհրդի աշխատանքային պլան

Ժամկետ	Օրակարգ	Պատասխանատու

Սեպտեմբեր	1. Գիտական խորհրդի տարեկան պլանի հաստատում 2. 2012-2013 ուստարվա ԵՊԼՀ-ի բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփում 3. 2012-2013 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփում 4. 2011-2012 ուստարվա գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում 5. ԵՊԼՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ստեղծման և կանոնադրության հաստատում 6. ԵՊԼՀ-ում կառուցվածքային նոր ստորաբաժանումների հաստատում	Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր ընդունելության քննությունների պատասխանատու քարտուղար ՄԾՀԲ ղեկավար ուսումնական գծով պրոռեկտոր ՏՏ վարչության պետ Համապատասխան ստորաբաժանման ղեկավար
Հոկտեմբեր	1. 2012-2013 ուստարվա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման անցկացման մեջ փոփոխությունների հաստատման մասին 2. Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ միջանկյալ զեկույց 3. Կառուցվածքային նոր ստորաբաժա-նումների կանոնադրության հաստատում:	ուսումնական գծով պրոռեկտոր, դեկաններ ՈԱԿ ղեկավար Ստորաբաժանման ղեկավար
Նոյեմբեր	1. Համալսարանական կարգերի լրամշակված տարբերակների հաստատում: 2. ԵՊԼՀ նոր ռազմավարության ներկայացում/հաստատում	ուսումնական գծով պրոռեկտոր դեկաններ, ՈԱԿ-ի ղեկավար

Դեկտեմբեր	1. ԵՊԼՀ ամբիոնների և կենտրոնների 2013թ. գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանների հաստատում: 2. Արտադրական և մանկավարժական պրակտիկայի անցկացման նոր հայեցակարգի հաստատում 3. Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ միջանկյալ զեկույց 4. 2011-2012 թթ. ուսխորհրդի տարեկան հաշվետվություն	Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Թողարկող ամբիոններ ՈԱԿ ղեկավար Ուսխորհրդի նախագահ
Հունվար	1. ԵՊԼՀ 2012թ. գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության հաշվետվություն: 2. ԵՊԼՀ բյուջեի կատարողականի հաշվետվություն և նոր բյուջեի հաստատում 3. Մագիստրոսական և հետբուհական ծրագրերի համակարգի զարգացման խնդիրներ	Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Գլխավոր հաշվապահ Ստորաբաժանման ղեկավար
Փետրվար	1. 2012-2013 ուստարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում 2. ԵՊԼՀ ռազմավարության իրականացման գործընթացի վերաբերյալ	ուսումնական գծով պրոռեկտոր ՈԱԿ ղեկավար
Մարտ	1. Համալսարանական կարգերի լրամշակված տարբերակների հաստատում: 2. ԵՊԼՀ ռազմավարության իրականացման գործընթացի վերաբերյալ	ուսումնական գծով պրոռեկտոր ՈԱԿ ղեկավար
Ապրիլ	1. Մագիստրոսական և հետբուհական ծրագրերի համակարգի զարգացման խնդիրներ 2. Դեկանների ամենամյա հաշվետվություն	Ստորաբաժանման ղեկավար ՌՕԼՖ դեկան

Մայիս	1. ԵՊԼՀ միջազգային գործունեության հաշվետվություն 2. Արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում 3. Դեկանների ամենամյա հաշվետվություն	Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր ուսումնական գծով պրոռեկտոր, դեկաններ ԼՄՀՖ դեկան
Հունիս	1. Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների ամփոփում 2. Մագիստրոսական ծրագրերի պատասխանատուների հաստատում 3. Դեկանների ամենամյա հաշվետվություն	ուսումնական գծով պրոռեկտոր ՄՀԾԲ ղեկավար ՕԼՖ դեկան

*****

Լսելով և քննարկելով գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը **«Եվրասիա լեզվամշակութային կենտրոնի կանոնադրության»** հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել **«Եվրասիա լեզվամշակութային կենտրոնի կանոնադրություն»**-ը և դնել գործողության մեջ:

*****

Լսելով և քննարկելով 2011-2012 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների վերաբերյալ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Ապրեսյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել Ա.Ապրեսյանի հաղորդումը 2011-2012 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների մասին՝

Արձանագրելով, որ

2. 2011-2012 ուս. տարվա գարնանային քննաշրջանում գրանցվել է ուսանողների առաջադիմության բարձրացում 1,2 %-ով (2011-2012 ուս. տարում՝ 59.3%, 2010-2011 ուս տարվա 58,1%-ի համեմատությամբ):

3. ի տարբերություն 2011-2012 ուս. տարվա՝ գարնանային քննաշրջանում անբավարար գնահատական ստացած և քննություններին չներկայացած ուսանողների քանակը 754 է նախորդ տարվա 1157-ի փոխարեն:

4. 2011-2012 ուս տարվա գարնանային քննաշրջանի ընթացքում ՕԼ, ՌՕԼ, ԼՄՀ ֆակուլտետներում և մագիստրատուրայում նկատվել է ուսանողների առաջադիմության բարձրացում համապատասխանաբար 6,6%-ով, 3,6%-ով, 6,1%-ով և 1,7 %-ով՝ 2010-2011 ուս տարվա գարնանային քննաշրջանի համեմատ:

5. ուսուցման պետպատվեր համակարգում սովորող ուսանողների առաջադիմությունը 2011-2012 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքում կազմել է 90% (2010-2011 ուս. տարում՝ 91.2%):

6. Ամփոփելով 2011-2012 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքները և հիմք ընդունելով ֆակուլտետային խորհուրդների հաշվետվությունները ՝ 2011-2012 ուս տարվա գարնանային քննաշրջանի արդյունքները համարել բավարար՝

արձանագրելով հետևյալ թերացումները.

6.1 Առաջադիմության ցածր մակարդակ է գրանցվել հատկապես «անգլերենի տեսական քերականություն», (ՕԼ և ԼՄՀ ֆակուլտետներ), «իտալերենի տեսական քերականություն», «անգլերենի տեսական հնչյունաբանություն» (ՕԼ ֆակուլտետ), «ռուսաց լեզվի շարահյուսություն» (ՌՕԼ ֆակուլտետ) առարկաներից:

6.2. Շուրջ 26 ուսանող հեռացվել է բուհից հատկապես ուսումնառության 6-րդ կիսամյակում կուտակած ակադեմիական պարտքերի պատճառով՝ դեկանատների և ամբիոնների կողմից պատշաճ կերպով տեղեկացված չլինելով ՀՀ ԿԳ նախարարի 2011 թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրամանով «Հայաստանի հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգ»-ի մի շարք ենթադրույթներից:

7. Ելնելով վերոնշյալից՝

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ

7.1. Մինչև ս/թ հոկտեմբերի 10-ը ամբիոնի վարիչներին վերանայել «անգլերենի տեսական քերականություն», «իտալերենի տեսական քերականություն», «անգլերենի տեսական հնչյունաբանություն», «ռուսաց լեզվի շարահյուսություն» դասընթացների առարկայական նկարագրերը, դասընթացի բարդության աստիճանը և դասավանդման մեթոդական ապահովումը, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ստուգման մեթոդներն ու եղանակները: Դեկաններին՝ ֆակուլտետային խորհուրդներում քննարկման առարկա դարձնել տվյալ հարցը և արդյունքները ներկայացնել ուսումնական վարչություն:

7.2. Ֆակուլտետների դեկաններին՝ հետամուտ լինել ՀՀԿԳ նախարարի դեռևս ս/թ փետրվար ամսին բուհերին ուղարկած շրջաբերականին, այն է՝ մինչև հաջորդ կիսամյակի քննաշրջանի սկիզբը ապահովել բուհի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի և ուսանողության լիարժեք իրազեկումը «Հայաստանի հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգ»-ի պահանջների վերաբերյալ» և մինչև ս/թ հոկտեմբերի 10-ը հանդիպում ունենալ ուսանողության և համապատասխան ֆակուլտետային խորհուրդների հետ և տալ մանրամասն պարզաբանումներ վերոնշյալ կարգի վերաբերյալ:

7.3 Ամբիոններին ֆակուլտետների հետ համատեղ քննարկման առարկա դարձնել բուհում գործող ուսանողների գնահատման անցողիկ միավորի (60 միավորի) նպատակահարմարությունը մինչև ս/թ հոկտեմբերի 10-ը ներկայացնել ուսումնական վարչություն:

Սույն որոշման կատարումը դնել դեկանների ու ամբիոնների վարիչների, իսկ վերահսկողությունը՝ ուսումնական գծով պրոռեկտորի վրա

*****

Լսելով և քննարկելով ուսումնական գծով պրոռեկտոր Ա. Ապրեսյանի հաղորդումը “Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ” զարգացման հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից տրամադրվող Մենդելեևի անվան կրթաթոշակների թեկնածուների ցանկի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել “Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ” զարգացման հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից տրամադրվող Մենդելեևի անվան կրթաթոշակների թեկնածուների ներքոնշյալ ցանկը.

Օտար լեզուների ֆակուլտետ՝	Պետրոսյան Արմինե Մանուկի	3.88
	Բեժանյան Անուշ Աշոտի	3.31
ԼՄՀ ֆակուլտետ՝	Կրանինա Սիմոնա Վյաչեսլավի	3.77
	Ներսիսյան Ինեսա Ամասիայի	3.52
	Օհանյան Աննա Վլադիմիրի	3.76
ՌՕԼ ֆակուլտետ՝	Հունանյան Տաթևիկ Հովհաննեսի	3.80
	Սարգսյան Հռիփսիմե Աբրահամի	3.76
	Հախինյան Հռիփսիմե Հակոբի	3.64

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց գրականագիտության ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Լիանա Ապրեսի Սաֆարյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար Գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ա. Չուլյան	- նախագահ
Հ. Սահակյան	- անդամ
Ա. Պետրոսյան	- անդամ

Գիտական խորհրդի 50 անդամներից ներկա էին 42-ը, որոնցից քվեարկեցին՝ ‘42’-կողմ, ‘0’-դեմ, անվավեր է ճանաչվել ‘0’ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ՝ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Լիանա Ապրեսի Սաֆարյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետով բանասիրական գիտությունների թեկնածու Լիանա Ապրեսի Սաֆարյանին շնորհել

դոցենտի գիտական կոչում «Գրականագիտություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ավագ դասախոս Հրաչյա Ալեքսանդրի Տաթևյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար Գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Ա. Չուլյան	- նախագահ
Հ. Սահակյան	- անդամ
Ա. Պետրոսյան	- անդամ

Գիտական խորհրդի 50 անդամներից ներկա էին 42-ը, որոնցից քվեարկեցին՝ ՝39՝-կողմ, ՝3՝-դեմ, անվավեր է ճանաչվել ՝0՝ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ՝ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Հրաչյա Ալեքսանդրի Տաթևյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետով բանասիրական գիտությունների թեկնածու Հրաչյա Ալեքսանդրի Տաթևյանին շնորհել դոցենտի գիտական կոչում «Հոգեբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ - Լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Սևակ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Սևակ Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Բայի ըղձական եղանակի դրսևորումները ժամանակակից հայերենում, իտալերենում և անգլերենում**

(զուգադրական–տիպաբանական վերլուծություն)»: *Գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյան:*

*****

ԼՍԵՑԻՆ - Հնչյունաբանության և քերականության ամբիոնի հայցորդ Ն. Պեպանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հնչյունաբանության և քերականության ամբիոնի հայցորդ Ն. Պեպանյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Ջ.Գ. Բայրոնի և Փ.Բ. Շելիի երկերի պոետիկայի արտացոլումը հայերեն և ռուսերեն թարգմանություններում**»: *Գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Դ. Համբարձումյան:*

*****

ԼՍԵՑԻՆ - Հնչյունաբանության և քերականության ամբիոնի առկա ասպիրանտ Ռաֆիկ Սանթրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հնչյունաբանության և քերականության ամբիոնի առկա ասպիրանտ Ռաֆիկ Սանթրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Պատճառականության կարգի առկայացման բառաքերականական միջոցները ժամանակակից անգլերենում /դատաիրավական տեքստերի նյութի հիման վրա/»: *Գիտական ղեկավար՝բ.գ.թ., դոցենտ Ն. Հովհաննիսյան:*

*****

ԼՍԵՑԻՆ – Ֆրանսերենի ամբիոնի դոցենտ Մ. Ղազարյանի «Grammaire francaise» դասագրքի և Ա. Արշակյանի, Հ. Գրիգորյանի, Է. Խանյանի, Ա. Կապլանյանի, Վ. Ղամբարյանի «Exercicier» վարժությունների ժողովածուի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ֆրանսերենի ամբիոնի դոցենտ Մ. Ղազարյանի «Grammaire francaise» դասագիրքը և Ա. Արշակյանի, Հ. Գրիգորյանի, Է. Խանյանի, Ա. Կապլանյանի, Վ. Ղամբարյանի «Exercicier» վարժությունների ժողովածուն ուղարկել հաստատման ՀՀ

ԿԳ նախարարություն որպես դասագիրք և վարժությունների ձեռնարկ երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ներկայացրած «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի. Պրակ 4» ժողովածուի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ներկայացրած «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի. Պրակ 4» ժողովածուն երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Արևելյան լեզուների ամբիոնի «Միջմշակութային և միջկրոնական երկխոսություն» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Արևելյան լեզուների ամբիոնի «Միջմշակութային և միջկրոնական երկխոսություն» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Ֆրանսերենի ամբիոնի «Աշխարհի լեզվական պատկերը» 3-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ֆրանսերենի ամբիոնի «Աշխարհի լեզվական պատկերը» 3-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – «Венок Брюсову» (կազմողներ՝ Է. Դանիելյան և Ա. Գևորգյան) բանաստեղծությունների ժողովածուի տպագրության երաշխավորման մասին:
ՈՐՈՇԵՑԻՆ – «Венок Брюсову» (կազմողներ՝ Է. Դանիելյան և Ա. Գևորգյան) բանաստեղծությունների ժողովածուն երաշխավորել տպագրության:

****

<u>26.26.2012թ. N 2 նիստ</u>

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2012-2013 ուստարվա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման ընթացակարգի մեջ փոփոխությունների մասին /Զեկ. Լ. Սաֆարյան/:
2. Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ միջանկյալ զեկույց /Զեկ. Ռ. Խաչատրյան/:
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կանոնադրության հաստատում /Զեկ Վ. Վարդանյան/:
4. Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոնի կանոնադրության հաստատում /Զեկ. Տ. Թորոսյան/:
5. ԵՊԼՀ-ի Երիտասարդ գիտնականների խորհրդի կանոնադրության հաստատում /Զեկ. Վ. Զաքարյան/:
6. «Եվրասիա» լեզվամշակութային կենտրոնի աշխատանքային պլանի հաստատում /Զեկ. Մ. Ամիրխանյան/:
7. Մրցույթ՝ դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:
8. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով ԵՊԼՀ-ի բակալավրիատի պետական ավարտական քննություններում փոփոխությունների վերաբերյալ ուսումնական գործընթացի կազմակերպման և համակարգման բաժնի ղեկավար Լ. Սաֆարյանի հաղորդումը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

- Հիմք ընդունելով ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը /2011թ հոկտ.31-ի N 1197-Ն հրաման/ և ելնելով պետական կրթական չափորոշիչների պահանջներից՝ հավանություն տալ բակալավրիատում յուրաքանչյուր մասնագիտության համար ավարտական որակավորման քննությունների ընթացակարգի ֆակուլտետային խորհուրդների առաջադրած տարբերակին՝ այն ամրագրելով ուսումնական պլաններում:

031100 **<<Լեզվաբանություն(անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն)>>** մասնագիտության **<<Լեզվաբանության բակալավր>>** որակավորման շրջանավարտների համար

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն կամ ամփոփիչ ատեստավորում լեզվաբանությունից /1հարց/ և մասնավոր լեզվի տեսությունից /2 հարց/
- Ամփոփիչ ատեստավորում. գրավոր քննություն
  1. Մամուլի տեքստի վերարտադրում/մեկնաբանում /հայերենից օտար լեզու/
  2. Էսսե՝ առաջարկված թեմայով

031100 **«Լեզվաբանություն (ռուսաց լեզու)»** մասնագիտության **«Լեզվաբանության բակալավր»** որակավորման շրջանավարտների համար

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն կամ ամփոփիչ ատեստավորում լեզվաբանությունից (1 հարց) և մասնավոր լեզվի տեսությունից (2 հարց)
- Ամփոփիչ ատեստավորում. գրավոր քննություն
  1. Տեքստի վերարտադրում /2-րդ օտար լեզվից ռուսերեն/
  2. Էսսե՝ առաջարկված թեմայով

031300 **<<Օտար լեզու և գրականություն>>, 032400<<Ռուսաց լեզու և գրականություն**>> մասնագիտության շրջանավարտների համար.
<<**Մանկավարժության բակալավր**>> որակավորման համար.

- Ամփոփիչ ատեստավորում մասնավոր լեզվի տեսությունից
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն կամ ամփոփիչ ատեստավորում մանկավարժությունից/օտար լեզվի դասավանդման մեթոդիկայից

<< Բանասիրության բակալավր>> որակավորման համար.

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն մասնավոր լեզվի տեսությունից կամ ուսումնասիրվող լեզվի գրականությունից
- Ամփոփիչ ատեստավորում մասնավոր լեզվի տեսությունից կամ ուսումնասիրվող լեզվի գրականությունից

031200 **<<Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն>>** մասնագիտության շրջանավարտների համար
<<Լեզվաբանության և հաղորդակցման բակալավր>> որակավորման համար

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն կամ ամփոփիչ ատեստավորում մասնավոր լեզվի տեսությունից
- Ամփոփիչ ատեստավորում մասնագիտացումից

032300 **<<Թարգմանչական գործ>>** մասնագիտության շրջանավարտների համար
<<Լեզվաբանության բակալավր>> որակավորման համար
Երկլեզու թարգմանիչ՝

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն կամ ամփոփիչ ատեստավորում թարգմանաբանության տեսությունից և մասնավոր լեզվի տեսական առարկաներից
- Ամփոփիչ ատեստավորում. գրավոր քննություն՝
  1. Տեքստի թարգմանություն հայերենից օտար լեզու
  2. Տեքստի թարգմանություն օտար լեզվից հայերեն

Եռալեզու թարգմանիչ՝
- Ամփոփիչ ատեստավորում թարգմանաբանության տեսությունից և մասնավոր լեզվի տեսական առարկաներից
- Ամփոփիչ ատեստավորում. գրավոր քննություն՝
  1. Տեքստի թարգմանություն ռուսերենից հայերեն և անգլերեն
  2. Տեքստի թարգմանություն անգլերենից հայերեն և ռուսերեն

Հանձնարարել

1. ամբիոններին մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը ֆակուլտետային խորհուրդների հաստատմանը ներկայացնել ամփոփիչ ատեստավորման համար նախատեսված հարցաշարերը, էսսեի թեմաները
2. ամբիոններին և ֆակուլտետների դեկաններին ներկայացնել առաջարկություններ ավարտական աշխատանքի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման գնահատման չափանիշների վեաբերյալ
3. ֆակուլտետների դեկաններին պատշաճ կերպով իրազեկել ուսանողներին ամփոփիչ ատեստավորման հարցաշարերի և անցկացման ձևի մասին:

*****

Լսելով և քննարկելով Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ղեկավար Վ. Վարդանյանի հաղորդումը « ԵՊԼՀ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կանոնադրության» հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել «ԵՊԼՀ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կանոնադրություն»-ը և դնել գործողության մեջ:

*****

Լսելով և քննարկելով Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը «ԵՊԼՀ-ի Երիտասարդ գիտնականների խորհրդի կանոնադրության» հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել «ԵՊԼՀ-ի Երիտասարդ գիտնականների խորհրդի կանոնադրություն»-ը և դնել գործողության մեջ:

*****

Լսելով և քննարկելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավ., ժող. և եվրոպ. ամբիոնի վարիչի ժ/պ Տ. Թորոսյանի հաղորդումը «ԵՊԼՀ-ի Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոնի կանոնադրության» հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել «ԵՊԼՀ-ի Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոնի կանոնադրություն»-ը և դնել գործողության մեջ:

*****

Լսելով և քննարկելով «Եվրասիա» լեզվամշակութային կենտրոնի ղեկավար Մ. Ամիրխանյանի հաղորդումը «Եվրասիա» լեզվամշակութային կենտրոնի 2013-2017թթ. հեռանկարային աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել «Եվրասիա» լեզվամշակութային կենտրոնի 2013-2017թթ. հեռանկարային աշխատանքային պլանը:

*****

Լսելով և քննարկելով 2012թ. հոկտեմբերի 17-20-ը Երևանում ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների և կրթության ոլորտի աշխատակիցների 2-րդ համագումարին մասնակցելու և աշխատանքներին աջակցելու համար ԵՊԼՀ

Միջազգային կապերի վարչության աշխատակիցներին և 21 ներքոնշյալ ուսանողներին պարգևատրելու մասին հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

2012թ. հոկտեմբերի 17-20-ը Երևանում ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների և կրթության ոլորտի աշխատակիցների 2-րդ համագումարին մասնակցելու և աշխատանքներին աջակցելու համար.

1. ԵՊԼՀ Միջազգային կապերի վարչության ներքոնշյալ աշխատակիցներին և ռեկտորի խորհրդական Հասմիկ Ափյանին որպես խրախուսում պարգևատրել 20.000 գումարի չափով.
    1. Սյուզաննա Մեջլումյանին,
    2. Արմեն Գրիգորյանին,
    3. Անուշ Մկրտչյանին,
    4. Նարեկ Տիգրանյանին,
    5. Մերի Դալլաքյանին:
2. ԵՊԼՀ 21 ներքոնշյալ ուսանողներին որպես շնորհակալություն տրամադրել ուղեգիր՝ 2 օրյա հանգիստ /նոյեմբերի 2-4/ ԵՊԼՀ Ծաղկաձորի հանգստյան տանը.
    1. Թունյան Անահիտ,
    2. Հովսեփյան Լուսինե,
    3. Ապրեսյան Միլանա,
    4. Պետրոսյան Էլիզաբեթ,
    5. Սիմոնյան Անի,
    6. Օրդինյան Մարիամ,
    7. Վիրաբյան Սյուզաննա,
    8. Օթարյան Անահիտ,
    9. Գևորգյան Եվգենյա,
    10. Սահակյան Լիանա,
    11. Հովանիսյան Նինել,
    12. Սայադյան Շուշաննա,
    13. Ավանեսյան Ասյա,

14. Մանվելյան Տաթև,

15. Եղիազարյան Լիլիթ,

16. Սեքսենյան Մարի,

17. Հովսեփյան Ասյա,

18. Մխիթարյան Անի,

19. Հարությունյան Աննա,

20. Գասպարյան Դիանա,

21. Մինասյան Դիանա:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Ալիսա Ալեքսանդրի Ղուկասյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար Գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Լ. Մարկոսյան	- նախագահ
Լ. Միլիտոսյան	- անդամ
Լ. Նարինյան	- անդամ

Գիտական խորհրդի 51 անդամներից ներկա էին 46-ը, որոնցից քվեարկեցին՝ ՝44՝-կողմ, ՝1՝-դեմ, անվավեր է ճանաչվել ՝1՝ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Ալիսա Ալեքսանդրի Ղուկասյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու Ալիսա Ալեքսանդրի Ղուկասյանին շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Անգլերենի հնչյունաբանության և

քերականության ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Կարինե Գրավիկի Աղաբեկյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար Գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Լ. Մարկոսյան - նախագահ
Լ. Միլիտոսյան - անդամ
Լ. Նարինյան - անդամ

Գիտական խորհրդի 51 անդամներից ներկա էին 46-ը, որոնցից քվեարկեցին՝ ՝32՝-կողմ, ՝11՝-դեմ, անվավեր է ճանաչվել ՝3՝ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:
2. Հաշվի առնելով, որ Կարինե Գրավիկի Աղաբեկյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու Կարինե Գրավիկի Աղաբեկյանին շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Անգլերենի հաղորդակցման ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Լիլիթ Ռոմիկի Աբրահամյանի դիմումը նրան դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար Գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Լ. Մարկոսյան - նախագահ
Լ. Միլիտոսյան - անդամ
Լ. Նարինյան - անդամ

Գիտական խորհրդի 51 անդամներից ներկա էին 46-ը, որոնցից քվեարկեցին՝ ՝28՝-կողմ, ՝16՝-դեմ, անվավեր է ճանաչվել ՝2՝ քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2. Հաշվի առնելով, որ Լիլիթ Ռոմիկի Աբրահամյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 «ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ հոդվածի “բ” ենթակետին, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Ռոմիկի Աբրահամյանին շնորհել դոցենտի գիտական կոչում «Լեզվաբանություն» մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

ԼՍԵՑԻՆ – Կոնֆուցիուսի ինստիտուտի ներկայացրած «Հայաստան և Չինաստան: 20 տարի համագործակցություն քաղաքականության, տնտեսության, լեզվի և մշակույթի ոլորտներում» 1-ին միջազգային գիտամեթոդական գիտաժողովի նյութերի ժողովածուի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Կոնֆուցիուսի ինստիտուտի ներկայացրած «Հայաստան և Չինաստան: 20 տարի համագործակցություն քաղաքականության, տնտեսության, լեզվի և մշակույթի ոլորտներում» 1-ին միջազգային գիտամեթոդական գիտաժողովի նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գրականագիտության ամբիոնի կողմից ներկայացրած 2011թ.-ին կայացած գրականագիտության ամբիոնի երիտասարդ գիտնականների գիտաժողովի նյութերը «Գրականագիտության արդի խնդիրները» խորագրով ԵՊԼՀ-ի «Բանբեր» պարբերականում տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Գրականագիտության ամբիոնի կողմից ներկայացրած 2011թ.-ին կայացած գրականագիտության ամբիոնի երիտասարդ գիտնականների գիտաժողովի նյութերը «Գրականագիտության արդի խնդիրները» խորագրով ԵՊԼՀ-ի «Բանբեր» պարբերականում երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ - Անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի առկա ասպիրանտ Մանան Աղաբեկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի առկա ասպիրանտ Մանան Աղաբեկյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Թոք-շոուի՝ որպես երկխոսական ժանրի լեզվագործաբանական առանձնահատկությունները /ժամանակակից անգլերենի և հայերենի նյութի հիման վրա/**»:
Գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանին:

*****

ԼՍԵՑԻՆ - Անգլերենի հաղորդակցման ամբիոնի հայցորդ Հեղինե Իսահակյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Անգլերենի հաղորդակցման ամբիոնի հայցորդ Հեղինե Իսահակյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ վերաձևակերպմամբ՝ «**Средства актуализации концептуальной метафоры в творчестве Дж. Фаулза**»: Գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Գասպարյանին:

*****

ԼՍԵՑԻՆ - Գերմաներենի ամբիոնի դասախոս Կարինե Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գերմաներենի ամբիոնի դասախոս Կարինե Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Գերմաներենի եղանակավորող մասնիկների իմաստագործառական առանձնահատկությունները**»:
Գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆեսոր Յու. Գաբրիելյանին:

****